



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն  
Արագածոտնի գյուղապետարան  
հեռ. 093-80-90-81  
17.11.2014թ.


ՀՀ Արագածոտնի մարզպետ  
պարոն Ս. Սահակյանին

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի  
ավագանու 2014թ. հոկտեմբերի 27-ի թիվ 12 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. ԱՂՉԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾՈՏՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի  
Արագածոտնի գյուղապետարան  
հեռ. 093 – 80-90-81

ՈՐՈՇՈՒՄ

27 հոկտեմբերի 2014թ. N12

«ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՅ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54.1 հոդվածով Արագածոտն գյուղական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Արագածոտն համայնքի «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մասին» խորհրդակցական մարմնի գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

Ավագանիներ՝

1. Լ. Ավետիսյան
2. Գ. Զարոյան
3. Տ. Բրոյան
4. Թ. Միրզոյան
5. Ա. Մկրտչյան

Համայնքի ղեկավար

/Մ. Ղազարյան/

## Հավելված

Արագածոտն համայնքի ավագանու  
27.10.2014թ. Թիվ 12 որոշման

### ԿԱՐԳ

«ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՍՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ» ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն գյուղական համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման մարմին» խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ խորհրդակցական մարմին) գործունեության, հանրային բաց լսումների կազմակերպման, անցկացման և դրանց վերաբերյալ ավագանուն տեղեկատվություն տրամադրելու ընթացակարգը:

2. Խորհրդակցական մարմինն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք արձանագրվում են:

3. Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

4. Հանրային լսումների իրականացման ժամկետն առնվազն 8 օր է:

5. Գյուղապետարանի ինտերնետային կայքում հրապարակվում է հանրային լսումների հրավեր, որը պարունակում է լսումների վայրի, ժամի, ժամկետների, քննարկման թեմայի, ինչպես նաև քննարկմանը մասնակցելու համար շահագրգիռ անձանց կողմից ներկայացվող դիմումների ընդունման վերջնաժամկետի (եթե նման դիմում ներկայացնելն անհրաժեշտ է) մասին տեղեկություններ:

Հրավերը հրապարակվում է նաև գանգվածային այլ լրատվամիջոցներով, ժամանակակից հեռահաղորդակցման այլ միջոցներով և փակցվում է համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երկու հազար բնակչի համար:

6. Հանրային լսումների հրավեր հրապարակելու հետ մեկտեղ ինտերնետային կայքում հրապարակվում է իրավական ակտի նախագիծը, իրավական ակտի ընդունման հիմնավորումը, ինչպես նաև այլ նյութեր:

7. Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք ինտերնետային կայքում հրապարակված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ կարող են գրավոր ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով: Եթե առաջարկությունները և դիտողություններն ուղարկվել են էլեկտրոնային հասցեով, ապա աշխատակազմը ոչ ոչ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան դիտողությունները և առաջարկություններն ստանալու մասին:

